11.09.2020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2020 թվականի
սեպտեմբերի 10-ի N 1517 - Ն որոշման

Կ Ա Ր Գ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲԽՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՎ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՆ

1. Սույն հավելվածը սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ դրամական պարտավորություններից բխող պահանջներով որպես պարտատեր հանդես եկող մարմնի (այսուհետ՝ պարտատեր)՝ ֆինանսական առողջացման ծրագրի քվեարկությանը մասնակցության կարգը:

2. Պարտատերը, տեղեկանալով դատարանում ֆինանսական առողջացման ծրագրի առկայության մասին, միջոցներ է ձեռնարկում նախքան սնանկության գործով կառավարչի կողմից պարտատերերի ժողովի հրավիրումը սնանկության գործով ֆինանսական առողջացման ծրագրին ծանոթանալու համար:

3. Պարտատիրոջ կողմից ֆինանսական առողջացման ծրագիրը անհրաժեշտության դեպքում կարող է ներկայացվել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություններին, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին (եթե որպես պարտատեր այլ մարմին է հանդես գալիս) և այլ մարմինների՝ յուրաքանչյուրի իրավասությանը վերաբերող հարցերի շրջանակում առողջացման ծրագրի քվեարկությանը մասնակցելու հարցի առնչությամբ կարծիք ստանալու

համար: Համապատասխան մարմինները ֆինանսական առողջացման ծրագրի վերաբերյալ կարծիքը տրամադրում են այն ստանալուց հետո ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. Պարտատերը ֆինանսական առողջացման ծրագրի քվեարկությանը մասնակցելու կամ չմասնակցելու, իսկ մասնակցելու դեպքում՝ նաև ֆինանսական առողջացման ծրագրին կողմ կամ դեմ քվեարկելու մասին կայացնում է որոշում: Ֆինանսական առողջացման ծրագրին մասնակցելու կամ չմասնակցելու մասին պարտատերը տեղեկացնում է նաև սնանկության գործով կառավարչին: Սույն կետով նախատեսված որոշումը կայացվում է որպես պարտատեր հանդես եկող մարմնի ղեկավարի կամ վերջինիս կողմից լիազորված պաշտոնատար անձի կողմից:

5. Ֆինանսական առողջացման ծրագրի քվեարկությանը մասնակցելու մասին որոշում կայացնելիս, ի թիվս այլնի, հաշվի են առնվում՝

1) ֆինանսական առողջացման ծրագրի հաստատման կամ չհաստատման դեպքերում պարտատիրոջ և պարտապանի շահերի ողջամիտ հարաբերակցությունը.

2) պարտապանի լուծարման նպատակահարմարությունը ֆինանսական առողջացման ծրագրի չհաստատման դեպքում.

3) պարտատիրոջ (պարտատերերի) պահանջների բավարարման չափը և աստիճանը՝ ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված միջոցառումների և ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետի հաշվառմամբ.

4) մինչև անվճարունակության հատկանիշների ի հայտ գալը պարտապանի գործունեության արդյունավետությունը, շուկայում տվյալ անձի հետագա գործունեության անհրաժեշտությունը:

6. Պարտատերը կարող է հաշվի առնել նաև այնպիսի հանգամանքներ, որոնք տվյալ գործի առանձնահատկությունների հաշվառմամբ անհրաժեշտ են և էական ֆինանսական

առողջացման ծրագրի քվեարկության մասնակցության, ֆինանսական առողջացման ծրագրին կողմ կամ դեմ քվեարկելու հարցերը որոշելիս:

7. Սույն հավելվածի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված հանգամանքներից յուրաքանչյուրի մասին, որոնք հիմք են ընդունվել պարտատիրոջ կողմից՝ ֆինանսական առողջացման ծրագրի քվեարկությանը մասնակցելու և ֆինանսական առողջացման ծրագրին կողմ կամ դեմ քվեարկելու հարցերը որոշելիս, պարտատերը անդրադառնում է իր որոշմամբ: Որոշման մեջ նշում է կատարվում նաև այն անձի մասին (անուն, ազգանուն, հայրանուն, անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, զբաղեցրած պաշտոն), ով լիազորված է մասնակցել ֆինանսական առողջացման ծրագրի քվեարկությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ